ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1250-Ա « 04 » ապրիլի 2025թ.

ՀԱՂԹԱՆԱԿ ԹԱՂԱՄԱՍ 6-ՐԴ ՓՈՂՈՑ Հ.30Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վարդան Սարգսյանի դիմումը՝ Հաղթանակ թաղամաս 6-րդ փողոց հ.30ա հասցեում գտնվող ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5547 վկայագրով Վարդան Սարգսյանին փոխանցված հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի պետական հ.Ա003259 ակտը և ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5547 վկայագիրը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ թաղամաս 6-րդ փողոց հ.30ա /տնամերձ/ հասցեում գտնվող հողամասի փաստացի չափագրությամբ մակերեսը կազմում է 479.4 քմ՝ փաստաթղթերում ամրագրված 500.0քմ-ի փոխարեն:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավա-րության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն-161899-24 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Հաղթանակ թաղամաս 6-րդ փողոց հ.30ա հասցեում գտնվող, ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.5547 վկայագրով Վարդան Սարգսյանին փոխանցված հողամասի /տնամերձ/ սահմանները որոշվում է 479.4քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ

դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246